



Հնագիտությունն ամենափոքրերի ընկալմամբ. չափազանց հետաքրքրասեր այցելուներ Էրեբունիում

20.10.2011թ.

«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանը երեկ ընդունել է Երևանի միջազգային դպրոցի հայ և տարբեր ազգություններ ներկայացնող 6-7 տարեկան 16 սաների, որոնց ծնողներն աշխատում են Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչություններում և արտասահմանյան ձեռնարկություններում: Այցի նպատակն էր պեղածո նյութերի հիման վրա նպաստել նախանադարյան հասարակության և նախամարդու մասին առաջին գիտելիքների յուրացմանը, ինչպես նաև ծանոթանալ Երևանի բնօրրանին՝ Էրեբունի ամրոցին: Ընդառաջելով դպրոցի տնօրինությանը և կարևորելով հնագիտական ժառանգության մանկավարժությունը վաղ դպրոցական տարիքից՝ արգելոց-թանգարանը հատուկ այս տարիքի երեխաների համար պատրաստել էր պարզեցված բացատրական էքսկուրսիա, որը տևել է նախատեսվածից երկար. փոքրիկները մեծ հետաքրքրություն են դրսևորել հատկապես սեպագիր արձանագրությունների նկատմամբ և անընդմեջ հարցրել՝ թե ինչու են ուրարտացիները թղթի վրա գրելու փոխարել նախընտրել քարը: Նրանց հետաքրքրել է նաև, թե որտեղ են պատրաստվել այդքան մեծ տարողության կարասներ, իսկ դիտելով որմնանկարները անհոգ հայտարարել են, թե իրենք էլ են ուրարտացիների նման նկարագարում իրենց բնակարանների պատերը:

Փոքրիկ այցելուներին, սակայն, չի զարմացրել աճյունասափորների մասին բացատրությունը. նրանցից շատերը տեղյակ են եղել դիակիզման ծեսին:

Թանգարանից հետո, բարձրանալով Էրեբունի ամրոցի միջնաբերդ, հետաքրքրասեր այցելուները նախ զարմացել են՝ տեսնելով իրենց առջև բացվող Երևանի համայնապատկերը: Այնուհետև լսելով, թե ինչպես է ամրոցը լույս աշխարհ եկել հողի շերտերից մաքրվելուց հետո՝ նրանք չեն զլացել գործի անցնել և, առանց կաշկանդվելու, փորձել են տարածքում առկա փոքրիկ քարակտորների օգնությամբ «պեղումներ ձեռնարկել»՝ նոր քաղաք բացահայտելու ակնկալիքով՝ ինչին արագորեն միջամտել են արգելոց-թանգարանի աշխատակիցը և ուղեկցող ուսուցիչները:

«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան